

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական
խորհրդի 24/06/2020թ. թիվ
143 նիստում



Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՊՐԱՆՔԱՅՆԱՑՄԱՆ

Սույն հայեցակարգը ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնում /այսուհետ ԳԿՄԿ/ իրականացվող հետազոտության արդյունքների ապրանքայնացման ոլորտում առկա խնդիրների և դրանց առաջնահերթ լուծումների մասին հայեցակարգային դրույթների համակարգ է:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի համար կարևորագույն ռազմավարական խնդիր համարելով հետազոտությունների ապրանքայնացումը՝ անհրաժեշտ է ապահովել այդ ուղղությամբ իրականացվող քաղաքականության արդյունավետության բարձրացումը:

1. Հետազոտությունների ապրանքայնացման ոլորտում առկա խնդիրների առաջնահերթ լուծումները՝

Հետազոտությունների ապրանքայնացման ոլորտում աշխատանքների հիմնական նպատակն է հետազոտությունների վրա հիմնված գիտահեն տնտեսության զարգացումը, որում վճռորոշ դերակատարություն պետք է ունենա ԳԿՄԿ-ն:

Ոլորտի բարեփոխումները պետք է ընթանան մի կողմից հետազոտությունների արդյունավետության բարձրացման և ենթակառուցվածքների արդիականացման ու կատարելագործման, մյուս կողմից ըստ գերակա ուղղությունների հետազոտական աշխատանքների նորովի կազմակերպման, ԳԱԱ համակարգում գիտական կադրերի նպատակային պատրաստման և տեղաբաշխման նրանց աշխատանքների արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Հետազոտական ոլորտի բարեփոխումների և ապրանքայնացման բարդ և բազմակողմ խնդրի մանրամասնեցված ծրագրավորումը և իրականացվող միջոցառումների ու մեխանիզմների մշակումն ու օգտագործումը կպահանջի այդ գործընթացների բարձրորակ կառավարում՝ ոլորտի առանձնահատկությունների համապատասխան մոտեցումների կիրառությամբ և կառավարման բարձր մասնագիտական կարողություններ ունեցող կադրերի օգտագործմամբ:

Դրա համար առաջնահերթ անհրաժեշտ է.

- ձևավորել հետազոտական ոլորտի և արդյունքների ապրանքայնացման միասնական ակադեմիական համակարգ,
- կիրառել հետազոտություններով զբաղվող մասնագետների խրախուսման գործուն մեխանիզմներ, ավելացնել հետազոտությունների ֆինանսավորման ծավալները, հստակեցնել ֆինանսավորման ձևերը և մեխանիզմները, բարձրացնել ֆինանսավորման արդյունավետությունը,
- ապահովել գիտական ներուժի արդյունավետ, նպատակային վերարտադրությունը, հետազոտական արդյունքների հանրայնացումը, իրագելումն ու հանրային պահանջարկի գույքագրումը:

- Կապված երկրի սոցիալական ու տնտեսական ոլորտներում առկա հետազոտությունների և արդյունքների պահանջարկի հետ՝ արդիականացնել, որոշ դեպքերում նաև ձևավորել հետազոտական ոլորտի նոր ենթակառուցվածքներ, նյութատեխնիկական բազա,
- հստակեցնել պահանջարկ վայելող հետազոտությունների գերակա ուղղությունները,
- ապահովել հետազոտություն - աշխատաշուկա ինտեգրումը,
- նպաստել հետազոտական արդյունքի ապրանքայնացմանը և դուրսբերմանը ներքին և արտաքին շուկա:

2. Հետազոտական ներուժի վերարտադրության ապահովում

Հետազոտական ներուժի վերարտադրությունն ապահովելու համար անհրաժեշտ է կարճ ժամկետում իրականացնել ԳԱԱ համակարգի հետազոտական ներուժի վերլուծություն, հետազոտական կադրերի պահանջարկի ուսումնասիրում և գնահատում: Հետազոտական ներուժի հաշվառման և արդյունավետ օգտագործման նպատակով անհրաժեշտ է ստեղծել կադրային բանկ, ներառելով դրանում նաև արտերկրում գործող գիտնականների տվյալները՝ համագործակցելով ակադեմիական ինստիտուտների ու ստորաբաժանումների հետ: Միաժամանակ անհրաժեշտ է մշակել հետազոտական ներուժի զարգացման ծրագիր, որը առաջնահերթ պետք է ուղղված լինի գիտական կադրերի երիտասարդացմանը:

3. Հետազոտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման անհրաժեշտություն

Հետազոտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացումը ենթադրում է առկա նյութատեխնիկական բազայի, այդ թվում՝ թանկարժեք և բացառիկ սարքավորումների գույքագրման, անձնագրավորման, կադրային ներուժի, ինչպես նաև ոչ նյութական ակտիվների հաշվառման առաջնահերթ իրականացում:

Միաժամանակ անհրաժեշտ է ստեղծել հետազոտական և գիտատեխնիկական միասնական հիմնարար գրադարանային համակարգ՝ ակադեմիական գրադարանների միավորմամբ ու խոշորացմամբ և գրադարանային սպասարկման նոր տեխնոլոգիաների ներդրմամբ, ստեղծել հետազոտության և տեխնոլոգիաների ոլորտում հետազոտական-վերլուծական, գիտատեղեկատվական և գիտախորհրդատվական համալիր կենտրոն:

4. Հետազոտությունների գերակա ուղղությունների հստակեցում՝

Գիտատեխնիկական քաղաքականության առաջնահերթությունների սահմանումը, հետազոտական ներուժի հնարավորությունների համապատասխան

վերլուծությունը հնարավորություն կընձեռի հետազոտությունների գերակա ուղղությունների հստակեցման համար: Անհրաժեշտ է սահմանված կարգով հաստատված չափանիշների հիման վրա վերասահմանել հետազոտությունների գերակայությունները: Այն ենթադրում է առաջին հերթին պահանջարկ վայելող հետազոտությունների ցանկի մշակում և վերահաստատում:

Հետազոտությունների գերակայությունները որոշելիս պետք է ելնել՝

- պետության համար կարևորագույն նշանակություն ունեցող ռազմավարական խնդիրներից, հայտարարված առաջնահերթություններից,
- միջազգայնորեն հեռանկարային հանդիսացող հետազոտական խնդիրներից,
- տվյալ ուղղությամբ գիտական դպրոցի առկայությունից, կամ դրա հիմնադրման հնարավորությունից,
- ազգային անվտանգությունից բխող խնդիրներից:

5. Կրթության և հետազոտության ինտեգրում

Հետազոտության և կրթության ինտեգրումը անհրաժեշտ է ԳԿՄԿ-ում կրթությունը մրցունակ և հրապուրիչ դարձնելու, գիտության վերարտադրությունը և տնտեսության կայուն զարգացումը ապահովելու համար:

Հետազոտության և կրթության ինտեգրումը ապահովելու համար անհրաժեշտ է մշակել ինտեգրման ծրագիր՝ ԳԿՄԿ բոլոր ամբիոնները տեղադրելով ակադեմիական գիտահետազոտական ինստիտուտներում:

Միաժամանակ անհրաժեշտ է ներդնել հետազոտական համալսարաններին բնորոշ չափանիշներ և աշխատել կարճ ժամկետում դառնալ այդպիսին:

6. Գիտական արդյունքի ապրանքայնացում և դուրսբերում ներքին և արտաքին շուկա

Առաջնահերթ խնդիր է հետազոտական արդյունքի ապրանքայնացումը և ազգային ներդրումային (ինովացիոն) համակարգին արդյունավետ ինտեգրումը: Անհրաժեշտ է հասնել նրան, որ հետազոտությունների արդյունքները որպես ապրանք դուրս բերվեն ներքին և արտաքին շուկա: Ըստ էության, անհրաժեշտ է հետազոտության ոլորտի բոլոր մակարդակներում լուծել առևտրայնացման խնդիրը: Նպատակ ունենալով ապահովել հետազոտության արդյունքի (այդ թվում՝ տեխնոլոգիաների) ապրանքայնացման խնդրի լուծումը, անհրաժեշտ է իրականացնել.

- հետազոտությունների արդյունքների (այդ թվում՝ տեխնոլոգիաների) ապրանքային ձևերի սահմանում,

- մտավոր սեփականության օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակում և պետական մարմիններին ներկայացում,
- ինովացիոն գործունեության համակարգի ձևավորում և հետազոտությունների արդյունքների ներդրման արդյունավետ մեխանիզմների ստեղծում,

Հետազոտությունների առաջընթաց զարգացումն ապահովելու նպատակով, նշված ներքին բարեփոխումներին զուգահեռ անհրաժեշտ է նախաձեռնել և ոլորտի այլ շահագրգիռ կառույցների հետ համատեղ մշակել ՀՀ-ում հետազոտությունների ապրանքայնացման զարգացման պետական ռազմավարական ծրագիր: